# «ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N *ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10-1*

ք. Դիլիջան «22» հուլիսի 2019թ.

**«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը**, ի դեմս տնօրեն **Գ.Սարգսյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«ԷԼԱՍՄՈԴԱ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Է.Հովսեփյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար.

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1** Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **9 133 650 /ինը միլիոն մեկ հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր հիսուն/** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.4 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10.** Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ 1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն՝ Գ. Սարգսյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**
**ՀՀ ք. Երևան, Դրոյի 8/4**
**«Յունիբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 24105020675400**
**ՀՎՀՀ՝ 00889965**
Տնօրեն՝ Է.Հովսեփյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով խատեսված ափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 18441130/1 | բերետներ | | Բերետի երեսացուն խակի գույնի, կտոր, արտ. 2203, բուրդ 50%, պոլիէստեր 50%, ձևվածքը բաղկացած է կանգունակից և վերևի կլոր մասից: Մշակված է աստառով: Կանգունակի ազատ եզրը երիզված է արհեստական կաշվով, որի միջով անցնում է ձգող քուղը: Բերետի ձախ մասի վրա տեղադրված է վարժարանի լոգոտիպով նշան:Արտաքին տեսքը և գույնի երանգը համաձայն հաստատված նմուշի: Քանակները ըստ չափսերի տրամադրում է պատվիրատուն: | հատ | 3450 | 862500 | 250.00 | ՀՀ, Գյումրի քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1 | 250 | 31.12.2019թ |
| 2 | 18231910/1 | բաճկոն — տաբատ | | Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Բաճկոնը միալանջ, խակի գույնի, գաղտնի կենտրոնական կոճկվածքով է, կոճկվում է 6 օղակ կոճակներով, 6-րդ կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ, սուրանկյուն եզրերով փռված ծալովի օձիք: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնի թիկունքամասը կոկետկայով է: Ուսադիրների շրջանում ամրացվում է 2 սմ լայնքով կամրջակ, ուսադիրների կամ կոչման տարբերանշանի ամրացման համար, որի ծայրը եզրաշերտին ամրացվում է մեկ կոճակով: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ կափույրներով, որոնք տեղակայված են՝ երկուսը կրծքամասում, իսկ երկուսը՝ կողային հատվածում: Կրծքամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ՝ լայնությունը 14,5 սմ, երկարությունը 16 սմ: Կրծքամասի գրպանները կոճկվում են 2սմ լայնության կպչուն ժապավենով: Առաջամասի կողային վրադիր գրպանների լայնությունը 17,5 սմ, երկարությունը 16,5 սմ, կափույրի լայնությունը 6 սմ: Գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 3 սմ բարձրության վրա: Հեռավորությունը աջ և ձախ փեշերի ուղղահայաց եզրերից՝ համաձայն տեխնիկական պայմանի: Գոտկատեղում մշակված են, 4 սմ լայնության ներկարված 2 ախլակներ՝ իրանի հարմարեցման չափսերի | լրակազմ | 19899 | 4974750 | 250.00 | | 250 | |

կարգավորման համար: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Թևքերիի վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կափույրի երկայնքով կոճկվում է 2 սմ լայնության կպչուն ժապավենով՝ լայնությունը 13 սմ, երկարությունը 16 սմ: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5 սմ լայնությամբ կարով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Թևքերի վերջավորություններում մշակված են ուղղանկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով Կոկետկայի և կրծքավանդակի ներսի կողմից կարվում է աստառ, վրադիր ծոցագրպանով, կոճկված օղակ կոճակով: Աստառը ԳՕՍՏ-20272-2014 8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գործվածքից:

<u>Տաբատը</u> խակի գույնի, ուղիղ ձևվածքով է, մշակված գոտիով: Գաղտնի կոճկվածքով /զուլֆիկով/ 4 օղակ կոճակով: Առաջամասում կողքից թեք ներկարված գրպաններ: Գոտին մշակված է 7 կամրջակով և գոտու չափը կարգավորող ներկարված 2 ախլակներով: Կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Տաբատի առաջամասում գրպանների ներքևի եզրերից մշակված են (եզրը՝ ներսից դուրս, 6 սմ շեղությամբ) քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի կտորից՝ զարդակարված 0,7սմ լայնությամբ կրկնակի կարով: Տաբատի փողքերի ներքամասում կարվում է կարգավորվող երկու կոճակ օղակներով փողքաժապավեն: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ԳՕՍՏ-20272-2014 8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գործվածքից աստառ:

Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամագծի, պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ պաշտպանական:

<u>Թևքանշանները</u> կարվում են բաճկոնի աջ և ձախ թևքին՝ ուսի և թևքի միացման կարից 8 սմ ներքև: Թևքանշանը պատրաստվում է սև թավշյա կտորի վրա, հակառակ կողմից ձգվում է հատուկ ձգող կտորաշերտով: Ձախ կողմի թևքանշանի վրա ասեղնագործված է <<Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան>>-ի լոգոտիպը, իսկ աջ կողմի վրա՝ ՀՀ ԶՈՒ զինանշանը: Թևքանշանները ամրակցվում են կպչուն ժապավենի միջոցով

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | (թեքանշանների դիզայնը և ձևը նախապես ճշտել պատվիրատուից): Ուսադիրները բաղկացած են՝ խակի գույնի դաշտից (բաճկոնի կտորից), եզրերը կարմիր գույնի 5մմ լայնության ասեղնագործած երիզներից, երիզների միջև, ուսադիրի ներքին եզրից դեպի ներս՝ 10մմ հեռավորության վրա, մեջտեղում ուսադիրի երկարությամբ ասեղնագործված կարմիր գույնի թելով «ՌՎ» տառերը: Տառերի բարձրությունը՝ 20մմ, լայնությունը 10մմ: Ուսադիրների հակադարձ կողմից ուսադիրի լայնությամբ (ուսադրի եզրերից 15 մմ հեռավորության վրա) մշակված է 20 մմ լայնությամբ 2 կամրջակ՝ ուսադիրները բաճկոնին հարմարեցնելու համար: Ուսադիրների չափսերը, դիզայնը և ձևը նախապես ճշտել պատվիրատուից: Երեսացուի գործվածքը և համազգեստի արտաքին տեսքը համաձայն պատվիրատուի կողմից տրամադրված նմուշի: Արտադրվում է 50% բամբակյա և 50% պոլիեստեր բաղադրությամբ կտորից՝ չգունաթափվող, կտորի խտությունը 220-240 գր/մ² : Բաճկոնի ներսի կողմի ձախակողմյան փեշին, ներքևից երեք սմ բարձրության վրա պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափա-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի՝ տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Չափսերը՝ 44/2 մինչև 50/4 չափսի՝ ըստ Պատվիրատուի սահմանած չափսերի և քանակների: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Թույլատրելի շեղումը՝ 2%: ՀԱՎԵԼՎԱԾ1.1 | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 18331300/1 | պոլո շապիկներ | | Շապիկն արտադրվում է բեժ գույնի 150-160 գրամ մակերեսային խտությամբ, 50% բամբակյա և 50% պոլիէսթեր բաղադրությամբ գործվածքից: Ուղիղ ձևվածքով է, կարճաթև, վզամասը կլոր՝ մշակված է բեժ գույնի 150-160 գրամ մակերեսային խտությամբ, 50% բամբակյա և 50% պոլիէսթեր բաղադրությամբ մանժետով: Մանժետի լայնությունը 1,5 սմ: Շապիկի վզամասի վերին եզրի կարի տակից ներսից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Արտաքին տեսքը համաձայն ներկայացված էսքիզի կամ համարժեք: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Արտաքին տեսքը և գույնի երանգը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%: | հատ | 786 | 196500 | 250.00 | | 250 | |
| 4 | 18221600/1 | կոստյումներ | | Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատթող տաբատից, համապատասխան ТУ 858-5300-2005 կամ համարժեք:<br>Կիտելը բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են չորս ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով:Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ՝ թևերը ներկարված: Աստառը՝ ԳՕՍՏ-20272-2014 8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք սև գույնի կտոր: Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրպան:<br>Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Կողային կարերում անցկացվում է 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ | հատ | 30999 | 3099900 | 100.00 | | 100 | |

համարժեք կարմիր գույնի մահուդից երիզներ: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար:
Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է՝ ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք սև գույնի կտորից աստառով:
Կոստյումի երեսացուն՝ 2313 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա սև գույնի գործվածքից, 329 գրամ մակերեսային խտությամբ 50% բրդի և 50% պոլիէսթեր բաղադրության: Աստառացուն ներսի կողմից ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք սև կտորից:
Պատրաստի արտադրանքի վրա, մատակարարի կողմից, կարվում են ուսադիրներ և թևքանշան: Ուսադիրի դաշտը մշակված է կարմիր գույնի գործվածքից, եզրերը կարմիր գույնի 5մմ լայնության ասեղնագործած երիզներից, երիզների միջև, ուսադիրի ներքևի եզրից դեպի ներս՝ 10 մմ հեռավորության վրա, մեջտեղում ուսադիրի երկարությամբ ասեղնագործված դեղին գույնի թելով «ՌՎ» տառերը: Տառերի բարձրությունը՝ 20մմ, լայնությունը 10մմ: Ուսադիրների չափսերը, դիզայնը և ձևը նախապես ճշտել պատվիրատուից:Ձախ թևի վրա տեղադրված է ՀՀ ԶՈՒ զինանշանով թևքանշան:
Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Կիտելի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ:
Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Արկղերի չափսերը՝ լայնությունը՝ 40սմ, բարձրությունը՝ 20սմ և երկարությունը՝ 80սմ(շեղումները 2%): Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից:
Անհրաժեշտության դեպքում, պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում

հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի:

Ձմեռային կոստյումը խակի գույնի է, բաղկացած է բաճկոնից և անդրավարտիքից: Բաճկոնի առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի մգդակարված 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով երկկողմանի մգդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորից:

Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարի լայնությունը 0,6 սմ: Առաջամասերում գոտկատեղից ներքև և բաճկոնի ներքին եզրից 5,5սմ բարձրության վրա մշակված են վրադիր կողային գրպաններ կափույրներով՝ կողից և վերևից մուտքերով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,6սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ 15մմ տրամագծով կոճակով: Կափույրի լայնությունը 5,5-6 սմ, գրպանի լայնությունը 19,5-20 սմ, երկարությունը՝ 21 սմ:Գրպանների երեսամասը կտորի հակառակ կողմից (ներսից) մշակված է սև կամ մուգ կապույտ գույնի ֆլիզե կամ համարժեք գործվածք: Աջ և ձախ թևքերի ծավալուն վրադիր գրպանների կենտրոնում կարվում են 7,5 սմ տրամագծով կպչուն ժապավեններ: Կպչուն ժապավենները պետք է լինեն պաշտպանական գույնի կամ շագանակագույն: Բաճկոնը ունի ներկարված թևքեր: Թևքերի վրա մշակված են վրադիր, կափույրով ծավալուն թեք գրպաններ, կափույրները կոճկվում են 1,5սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Թևքերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով վրադիր արմնկակալներ: Թևքերի բազուկային մասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող էլաստիկ ժապավենից ամրացրած պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2հատ 15մմ տրամագծով կոճակներով:

Բաճկոնը կոճկվում է շղթայով և 6 հատ 20մմ տրամագծով կոճակօղակներով: Մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Եզրաշերտի վրա, վերևից 15 սմ ներքև ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,5սմ լայնությամբ պատա՝ կոչման տարբերանշանի համար, ներքևի ծայրը եզրաշերտին ամրացվում է կպչուն ժապավենով:Պատայի վերին եզրին հավասար աջ և ձախ մասերում կրծքամասում, կրծքանշանները փակցնելու համար, կարվում են 13,0 x 2,5-3 սմ

չափսերի կպչուն ժապավեններ: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի միճակում՝ 2սմ: Թևքի ներքևի մասը ներսի կողմից մշակված է 10 սմ երկարությամբ էլաստիկ տրիկոտաժե մանժետով (բազկակալով)՝կողից բթամատի բացվածքով:

Բաճկոնը ներսի կողմից գոտկատեղի ուղղությամբ մշակվում է անջրաթափանց արհեստական գործվածքից բամապաշտպան շերտով՝ 18-20սմ լայնությամբ: Այն եզրից մշակվում է 2-2,5 սմ լայնությամբ էլաստիկ ժապավենով, որը առաջամասում կոճկվում է 15մմ տրամագծով 3 կոճակ-օղակով: Վզատեղը մշակված է օձիքով: Օձիքը ունի կտրած կանգունակ: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ:

Բաճկոնին միացված է անջրաթափանց արհեստական գործվածքից գլխանոց: Լանջափեշատակում մշակված է ծոցագրպան ատրճանակի համար: Գրպանի ներսից ամրացվում է քուղ՝ մետաղական բռնակով:

Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով:

Բաճկոնին կոճկվում է հանովի մորթե օձիք,որը կոճկվում է 5 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 5 հատ 15մմ տրամագծով կոճակներով:

Օձիքը կոճկվում է բաճկոնին, լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 15մմ տրամագծով կոճակներով: Օձիքի մորթու 1մ2 մակերեսային խտությունը՝ 730 գրամ +/-50գ/ մ2, խավի բարձրությունը՝ 12մմ ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով:

**Անդրավարտիքը**

Մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով է: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասից կոճկվում են գաղտնի կոճկվածքով 1 օղակ15մմ տրամագծով կոճակով: Գրպանի լայնությունը 20 սմ, երկարությունը 24 սմ, եռածալ, ծալքերի լայնությունը 5 սմ, ծալքերը ներքևից 2 սմ ամրակարված: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով:

Գոտու վրա տեղադրված են 5 կամրջակներ և գոտու չափը կարգավորող 2 ափլակներ, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա:Ափլակները կոճկվում են 1 օղակով և 2 հատ15մմ տրամագծով կոճակով: Առաջամասում մշակված են ծնկակալեր: Անդրավարտիքը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, /գույֆիկով/ 5 հատ 15մմ

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տրամագծով օղակ կոճակներով, որից երկուսը գոտու վրա են: Անդրավարտիքը ներքնամասում կապվում է կապիչներով: Անդրավարտիքի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի աստառացուի ձախակողմյան փեշի ներքին եզրից 15սմ բարձրության վրա կողակարին կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը: Թույլատրելի շեղումը՝ 2%: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի կողմից տրամադրվում է երեսացուի գործվածքը, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կտորի ծախսի և մնացորդների վերաբերյալ: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: ՀԱՎԵԼՎԱԾ 1.2 | | | | | | | |

*անքի մատակարարման ժամկետը պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և
պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի
ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*ուսփի ծևանմուշները կից ֆայլում են: Մատակարար կազմակերպությունը, պայմանագիրը կնքելուց հետո 5 օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման
ծայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ , 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ | **«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ** |
| ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1 | **ՀՀ ք. Երևան, Դրոյի 8/4** |
| ,,Արարատբանկ,, | **«Յունիբանկ» ՓԲԸ** |
| Հ/Հ 1510042359830100 | **Հ/Հ 24105020675400** |
| ՀՎՀՀ 07619891 | **ՀՎՀՀ՝ 00889965** |
| **Տնօրեն՝ Գ. Սարգսյան** | Տնօրեն՝ Է.Հովսեփյան |
| ------------------------------ (ստորագրություն) | ------------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1.1*
*«22» հուլիսի 2019թ. կնքված*
***ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10-1*** *ծածկագրով պայմանագրի*

Չափս-հասակային սանդղակ

| Կրծքավանդակի շրջագիծ / Հասակը | 44 | 46 | 48 | 50 | 52 | 54 | Ընդամենը /հատ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 15 | 10 | 5 | 5 | | | 35 |
| **3** | 30 | 90 | 25 | 5 | | 2 | **152** |
| **4** | 5 | 20 | 25 | 5 | 2 | | **57** |
| **5** | | 2 | 2 | 2 | | | **6** |
| Ընդամենը /հատ/ | **50** | **122** | **57** | **17** | **2** | **2** | **250** |

ԳՆՈՐԴ
«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
**Տնօրեն՝ Գ. Սարգսյան**

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
**«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**
**ՀՀ ք. Երևան, Դրոյի 8/4**
**«Յունիբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 24105020675400**
**ՀՎՀՀ՝ 00889965**
Տնօրեն՝ Է.Հովնեփյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված1.2
«22» հուլիսի 2019թ. կնքված
*ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10-1 ծածկագրով պայմանագրի*

Չափս-հասակային սանդղակ

| Կրծքավանդակի շրջագիծը / Հասակը | 44 | 46 | 48 | 50 | 52 | 54 | Ընդամենը /հատ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 15 | 10 | 5 | 5 | | | 35 |
| 3 | 30 | 90 | 25 | 5 | | 2 | 152 |
| 4 | 5 | 20 | 25 | 5 | 2 | | 57 |
| 5 | | 2 | 2 | 2 | | | 6 |
| Ընդամենը /հատ/ | 50 | 122 | 57 | 17 | 2 | 2 | 250 |

ԳՆՈՐԴ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
**Տնօրեն՝ Գ. Մարգսյան**

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
**«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**
**ՀՀ ք. Երևան, Դրոյի 8/4**
**«Յունիբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 24105020675400**
**ՀՎՀՀ՝ 00889965**
Տնօրեն՝ Է.Հովսեփյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«22» հուլիսի 2019թ. կնքված*
*ՄՄԱՌՎ-ԳՀ ԱՊՁԲ-19/10-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 18441130/1 | բերետներ | - | - | - | - | - | - | - | 862500 | 862500 | 862500 | 862500 | 862500 | 862500 |
| 2 | 18231910/1 | բաճկոն — տաբատ | - | - | - | - | - | - | - | 4974750 | 4974750 | 4974750 | 4974750 | 4974750 | 4974750 |
| 3 | 18331300/1 | պոլոշապիկներ | - | - | - | - | - | - | - | 196500 | 196500 | 196500 | 196500 | 196500 | 196500 |
| 4 | 18221600/1 | կոստյումներ | - | - | - | - | - | - | - | 3099900 | 3099900 | 3099900 | 3099900 | 3099900 | 3099900 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | **9 133 650** |

ԳՆՈՐԴ
«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն` Գ. Սարգսյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
**«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**
**ՀՀ ք. Երևան, Դրոյի 8/4**
**«Յունիբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 24105020675400**
**ՀՎՀՀ՝ 00889965**
Տնօրեն` Է.Հովսեփյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 3*
*«22» հուլիսի 2019թ. կնքված*
*ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10-1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հh ______________________

հվհh ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հh ______________________

հվհh ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ ___________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«22» հուլիսի 2019թ. կնքված*
*ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

Հանձնեց

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն